

**ՀՀ բուհերի «Սոցիալական աշխատանք»
մասնագիտության ուսումնական
ծրագրերի վերլուծություն**

2017

ՀՀ բուհերի «Սոցիալական աշխատանք» մասնագիտության ուսումնական ծրագրերի վերլուծություն

1. «Սոցիալական աշխատողի» որակավորման ծրագրերը ՀՀ բուհ-երում

Քսանմեկերորդ դարի հասարակությունում, որը լի է սոցիալական, տնտեսական, քաղաքական և բնապահպանական ճեպընթաց փոփոխություններով և տրանսֆորմացիաներով, առկա են բազմաթիվ սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրներ, ինչպես աղքատությունը, ֆիզիկական սահամանփակումներ ունեցող մարդկանց խնդիրները, գենդերային անհավասարությունը, գլոբալ տաքացումը, միգրանտների և փախստականների սոցիալական խնդիրները և այլն: Հասարակության անդամները, որոնք միկրոմակարդակում բախվում են այս խնդիրների հետ կարիք ունեն մասնագիտական և որակավորված օգնության, որը մատուցում են պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունները: Այս սոցիալական ծառայությունների աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է Հայաստանյան բուհ-երի կողմից պատրաստվող ապագա մասնագետների կրթության որակից և տրամադրվող գիտելիքների համապատասխանությունից մասնագիտությանը ներկայացվող համաշխարհային պահանջներին:

Ըստ «Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի» կողմից մշակված սոցիալական աշխատողի մասնագիտության գլոբալ չափանիշների՝ սոցիալական աշխատանքի մասնագետի գիտելիքի տիրույթը պետք է ներառի՝

- Հասարակական բոլոր մակարդակներում անահատների գործառնության և զարգացման վրա սոցիալ-կառուցվածքային անահավասարության, խտրականության, ճնշումների, և սոցիալական, քաղաքական ու տնտեսական անարդարության ազդեցության քննադատական հասակացում:

- Մարդակային վարքի և զարգացման, սոցիալական միջավայրի իմացություն՝ հատուկ շեշտադրմամբ անհատի փոխազդեցությունների, կյանքի զարգացման փուլերի և անհատի զարգացման և վարքի ձևավորման ընթացքում կենսաբանական, հոգեբանական, սոցիալ-կառուցվածքային, տնտեսական, մշակութային և հոգևոր գործոնների փոխազդեցության վրա:

- Բոլոր մակարդակներում անհատի զարգացման և գործառնության վրա ավանդույթների, մշակույթի, հավատի, կրոնների և ավանդությունների ազդեցության իմացություն՝ ներառյալ, թե ինչպես այս ամենը կարող է ռեսուրս կամ պայման հանդիսանալ զարգացման և աճի համար:

- Սոցիալական աշխատանքի ծագման և նպատակների քննադատական հասկացում:
- Գյուղական սոցիալական աշխատանքի նպատակների և զարգացման քննադատական հասկացում:
- Հարակից մասնագիտությունների և ոլորտների պատշաճ իմացություն՝ միջմասնագիտական համագործակցություն և թիմային աշխատանք կազմակերպելու նպատակով:
- Տեղական, ազգային և միջազգային մակարդակներում սոցիալական բարեկեցության քաղաքականությունների, ծառայությունների և օրենքների իմացություն, ինչպես նաև քաղաքականության պլանավորման, իրականացման զարգացման և սոցիալական փոփոխությունների գործարնթացներում սոցիալական աշխատանքի դերի իմացություն:
- Բոլոր սոցիալական մակարդակներում անհատի գործառնության և զարգացման վրա սոցիալական կայունության, փոխադարձ հարգանքի, ներդաշնակության ազդեցության քննադատական հասկացում:¹

Այս գիտելիքների տրամադրումը նախնառաջ խեղճ է իրականացվի բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից, որոնք պատրաստում և ձևավորում են ապագա սոցիալական աշխատողներին: Սոցիալական աշխատանք մասնագիտությունը ՀՀ-ում դասավանդվում է 1988-ականներից ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանակներում: ԵՊՀ-ի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը առանձնացել է և դարձել ինքնուրույն միավոր 2004 թ-ին:

Ընդհանուր առմամբ՝ սոցիալական աշխատողի որակավորմանն ուղղված ծրագրեր այսօր Հայաստանում առաջարկում են չորս բուհ՝ ԵՊՀ-ն, ՀՊՄԻ-ն, Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանը և ԳՊՄՀ-ն: Սոցիալական աշխատողի մագիստրոսի որակավորմանն ուղղված ծրագրեր առաջարկում են միայն երեք բուհ՝ ԵՊՀ-ն, ՀՊՄԻ-ն և Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանը:

¹ <http://ifsw.org/policies/global-standards/>

1.1. «Սոցիալական աշխատանք» մասնագիտացմամբ բակալավրի ուսումնական ծրագրերը ՀՀ բուհ-երում

Սոցիալական աշխատանքի բակալավրիատը նպատակ ունի տալ ուսանողներին բավարար գիտելիք, հմտություններ, փորձ և արժեքային կողմնորոշում՝ սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում մասնագիտորեն աշխատելու սոցիալական աջակցության կարիք ունեցող մարդկանց, խմբերի և համայնքների հետ:²

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը պետք է նախատեսի հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական կրթաբլոկեր: Մասնավորապես անրադառնանք պարտադիր ընդհանուր մասնագիտական դասընթացներին:


040100՝ «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը ներառում է 32 ընդհանուր մասնագիտական առարկա՝

1. Սոցիալական աշխատանքի հիմունքներ
2. Սոցիալական աշխատանքի սոցիոլոգիական հիմքերը
3. Սոցիալական աշխատանքի հոգեբանական հիմքերը
4. Սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը
5. Հետազոտության մեթոդները սոցիալական աշխատանքում
6. Սոցիալական աշխատանքի պատմություն
7. Հոգեբանություն
8. Սոցիալական աշխատանքի էթիկական հիմքերը
9. Սոցիալական մանկավարժություն
10. Մարդու իրավունքները և սոցիալական աշխատանքը
11. Սոցիալական քաղաքականության հիմունքներ
12. Սոցիալական վերահսկողություն և շեղվող վարք
13. Սոցիալական կառավարում
14. Կոնֆլիկտաբանության տեսություն և պրակտիկա
15. Սոցիալական դեպքի կառավարում
16. Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն
17. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք է1
18. Միջոցների հավաքագրում
19. Սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում
20. Ժողովրդագրություն և վիճակագրություն
21. Մարդու կյանքի փուլերը

² Բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչ 040100՝ «Սոցիալական աշխատանք»

22. Սոցիալական խորհրդատվության հիմունքներ
23. Սոցիալական աշխատանքի մեթոդներ
24. Սոցիալական աշխատանքի մոդելներ
25. Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ
26. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 1
27. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 2
28. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 3
29. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 2
30. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 3
31. Սոցիալական աշխատանքի ուղղությունները 1
32. Սոցիալական աշխատանքի ուղղությունները 2

Օրինակելի ուսումնական պլանում ընդհանուր մասնագիտական դասընթացներին տրվում է 240 կրեդիտից 157-ը: Ընդհանուր մասնագիտական դասընթացները ներառում են ոչ միայն բուն սոցիալական աշխատանքի հետ առնչվող առարկաներ, այլև հարակից ոլորտների հետ առնչվող դասընթացներ, ինչպես սոցիոլոգիան, հոգեբանությունը, մանկավարժությունը և իրավագիտությունը: Ընդհանուր մասնագիտական դասընթացների 16%-ը կրում են սոցիոլոգիական բնույթ կամ ունեն սերտ առնչություն սոցիոլոգիայի հետ, 3%-ը մանկավարժական հիմքով են, 6%-ը՝ իրավագիտական, 9%-ը՝ հոգեբանական և 66%-ը կրում են բուն մասնագիտական բնույթ՝ այսինքն, անմիջականորեն վերաբերում են միայն սոցիալական աշխատանքին:



ԵՊՀ «Սոցիալական աշխատանքի» ֆակուլտետի բակալավրի ծրագիրը ներառում է այս բոլոր առարկաների դասավանդումը:

Դիտարկելով պետական չափորոշիչին համապատասխանող ծրագիրը, կարող ենք նկատել մի շարք առարկաների անվանումների կրկնություն, ինչպես օրինակ՝ «Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 1», «Ինստիտուցիոնալ սոցիալական

աշխատանք 2», «Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 3»: Դասընթացների այսպիսի անվանական կրկնությունը իր մեջ պարունակում է նաև դասընթացների բովանդակային համընկնումների վտանգ: Անվանումներից դժվար է որոշել, թե ինչով պետք է այս առարկաների բովանդակությունները տարբերվեն միմիանցից:

Օրինակելի ուսումնական պլանի ուղղվածությունը տեսական է, այն ուղղված է «սոցիալական աշխատանքի» և հարակից տեսական բազայի ուսումնասիրությանը, սակայն պրակտիկ աշխատանքին առավել պակաս ուշադրություն է տրամադրվում: Պրակտիկ աշխատանքին տրվում է բակալավրի ծրագրի ուսումնասիրությանը հատկացվող ժամաքանակի 15%-ը: Մինչդեռ սոցիալական աշխատանքի համաշխարհային կրթական շուկայում նախընտրությունը տրվում է «դեպքերի ուսումնասիրության» վրա հիմնվող ուսումնական գործընթացին:


ԵՊՄԻ-ի «Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնը հիմադրվել է 2009 թ.-ին: Սոցիալական աշխատանքի բաժնի բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է 48 ընդհանուր մասնագիտական առարկա:

1. Ընդհանուր հոգեբանություն
2. Ընդհանուր սոցիոլոգիա 1
3. Սոցիալական աշխատանքի հիմունքներ
4. Մանկավարժություն
5. Ընդհանուր սոցիոլոգիա 2
6. Սոցիալական աշխատանքի մեթոդներ 1
7. Սոցիալական աշխատանքի հիմունքներ 1
8. Սոցիալական աշխատանքի պատմություն 1
9. Ժողովրդագրություն և սոցիալական վիճակագրություն
10. Սոցիալական աշխատանքի մեթոդներ 2
11. Սոցիալական աշխատանքի պատմություն 2
12. Սոցիալական աշխատանքի սոցիոլոգիական հիմքերը
13. Ինֆորմացիոն տեխնոլոգիաները սոցիալական բնագավառում
14. Սոցիալական աշխատանքի հոգեբանական հիմքերը
15. Սոցիալական աշխատանքի հոգեբանական հիմքերը
16. Սոցիալական աշխատանքի մոդելները
17. Սոցիալական մանկավարժություն
18. Սոցիալական հոգեբանություն
19. Միջազգային սոցիալական աշխատանք
20. Մարդու իրավունքը և սոցիալական աշխատանքը
21. Սոցիալական քաղաքականություն
22. Սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը
23. Սոցիալական աշխատանքի տնտեսական հիմքերը
24. Սոցիալական ապահովագրում

25. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ
26. Սոցիալական հոգեբանություն
27. Կոնֆլիկտաբանություն
28. Հոգեբանություն
29. Ժամանակակից հոգեբանության տեսություններ
30. Սոցիալակն հոգեբանություն
31. Սոցիալական աշխատանք իրավախախտների հետ
32. Սոցախտաբանություն
33. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք
34. Սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը
35. Սոցիալական դեպքի կառավարում
36. Սոցիալական աշխատանքի բժշկական հիմքերը
37. Կենսաթոշակային ապահովագրում
38. Սոցիալական խորհրդատվության հիմունքները
39. Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ
40. Սոցիալական վերականգնում
41. Սոցիալական ձեռներեցություն
42. Սոցիալական աշխատանքի մենեջմենթ
43. Այլընտրանքային սոցիալական ծառայություններ
44. Սոցիալական խորհրդատվության հիմունքներ
45. Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ
46. Սոցիալական էկոլոգիա
47. Սոցիալական աշխատանքի էթիկական հիմքերը
48. Կենսաթոշակային ապահովագրում

ՀՊՄՀ-ի «Սոցիալական աշխատանքի» բաժնի բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է պետական չափորոշին համապատասխան ձևավորված ուսումնական ծրագրի ընդհանուր մասնագիտական առարկաների 59%-ը: Տվյալ ուսումնական ծրագրի մասնագիտական առարկաների 40%-ն են կազմում պետական կրթական չափորոշիչով նախատեսված մասնագիտական առարկաները, այսինքն դասավանդվող 48 մասնագիտական առարկաներից 19 առարկան է համապատասխանում կրթական պետական չափորոշիչի մասնագիտական առարկաների ցանկին: Ընդհանուր 240 կրեդիտից մասնագիտական առարկաներին տրվում է 156 կրեդիտ:

Տվյալ ուսումնական ծրագրում դասընթացների տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ դասընթացների ակադեմիական բնույթի կրում է հետևյալ պատկերը:



Բուն մասնագիտական առարկաների քանակությունը 10%-ով պակաս է, քան պետական կրթական չափորոշիչով կազմված ուսումնական ծրագրում: Փոխարենը, ավելի շատ են հոգեբանական հիմքով առարկաները, իսկ սոցիոլոգիական հիմքով առարկաները 6%-ով ավելի քիչ են:

Մասնագիտական առարկաների թիվը ՀՊՄԻ-ի «Սոցիալական աշխատանքի» բաժնի բակալավրի ուսումնական ծրագրում մեծ է, սակայն ներառված չեն հետևյալ ընդհանուր մասնագիտական առարկաները՝

1. Հետազոտության մեթոդները սոցիալական աշխատանքում
2. Սոցիալական վերահսկողություն և շեղվող վարք
3. Սոցիալական կառավարում
4. Սոցիալական դեպքի կառավարում
5. Միջոցների հավաքագրում
6. Սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում
7. Մարդու կյանքի փուլերը
8. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 2
9. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 3
10. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 2
11. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 3
12. Սոցիալական աշխատանքի ուղղություններ 2

Ուսումնական ծրագրի դասընթացների քանակությունը մեծ է, գերակայում է օրինակելի ուսումնական ծրագրի առարկաների քանակությանը, սակայն այսպիսի դասընթացային հազվեցվածությունը կարող է բերել ուսանողների գերձանրաբեռնվածության, մինչդեռ ծրագրում բացակայում է այնպիսի մասնագիտական նշանակություն ունեցող առարկա, ինչպես «Հետազոտության մեթոդները սոցիալական աշխատանքում»: Ծրագիրը գերհազված է

մասնագիտական դասընթացներով, որոնցից յուրաքանչյուրին տրվում է փոքր թվով կրեդիտներ:


Ուսումնական ծրագիրը ներառում է չորս կամընտրական մասնագիտական առարկաներ, որոնց շարքին պատկանում են նաև «Սոցիալական աշխատանքի էթիկական հիմքեր» և «Սոցիալական էկոլոգիա» դասընթացները: Ուսանողը կարող ընտրել և ուսումնասիրել այս երկու առարկաներից միայն մեկը: Այսինքն, «Սոցիալական էկոլոգիա» դասընթացը ուսումնասիրող ուսանողները չեն ուսումնասիրի սոցիալական աշխատանքի էթիկական սկզբունքները, ինչը ենթադրաբար ապագա մասնագիտական գործունեության ընթացքում տվյալ ոլորտում գիտելիքների պատկասի հետևանքով կարող է առաջացնել որոշ մասնագիտական-էթիկական խնդիրներ: Ուսումնական ծրագրում կամընտրական առարկաներ ներառելիս նախևառաջ պետք է ուշադրություն դարձնել դասընթացների համարժեքությանը և դրանց մասնագիտական կարևորությանը:

Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի «Սոցիալական աշխատանքի» բաժնի բակալավրի ուսումնական ծրագիրը նախատեսում է 50 ընդհանուր մասնագիտական առարկայի դասավանդում: Տվյալ առարկաներն են՝

1. Սոցիալական աշխատանքի պատմություն
2. Սոցիալական վերահսկողություն և շեղված վարք
3. Հոգեֆիզիոլոգիա
4. Արատաբանություն
5. Անատոմիա և ֆիզիոլոգիա 1
6. Անատոմիա և ֆիզիոլոգիա 2
7. Հատուկ հոգեբանություն
8. Սոցիոլոգիայի հիմունքներ
9. Իմացական գործընթացներ
10. հուզկամային ոլորտի հոգեբանություն
11. Գործունեության և շփման հոգեբանություն
12. Անհատական առանձնահատկություններ
13. Խառնվածքի և բնավորության տեսություններ
14. Սոցիալական աշխատանքի ուղղություններ
15. Սոցիալական հոգեբանություն
16. Հաղորդակցումը սոցիալական աշխատանքում
17. Սոցիալական վարչարարություն
18. Հոգեախտորոշում
19. Սոցիալական աշխատանքի հիմունքներ
20. Անձի հոգեբանություն
21. Թեստոլոգիա
22. Հոգեթերապիայի և կոնսուլտացիայի հիմունքներ 1

23. Հոգեթերապիայի և կոնսուլտացիայի հիմունքներ 2
24. Հոգեվերլուծության հիմունքներ 1
25. Հոգեվերլուծության հիմունքներ 2
26. Հոգեբանության ծառայության կազմակերպում
27. Կոնֆլիկտաբանության տեսություն և պրակտիկա
28. Սոցիալական աշխատանքի էթիկա
29. Սոցիալական աշխատանք 1
30. Սոցիալական աշխատանք 2
31. Բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիա 1
32. Բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիա 2
33. Ներառական կրթություն
34. Կլինիկական հոգեբանություն
35. Տարիքային հոգեբանություն 1
36. Տարիքային հոգեբանություն 2
37. Սոցիալական քաղաքականություն, սոցիալական ռիսկեր և դրանց հաղթահարման ուղիները 1
38. Սոցիալական քաղաքականություն, սոցիալական ռիսկեր և դրանց հաղթահարման ուղիները 2
39. Ներքին հիվանդություններ
40. Հոգեբուժություն 1
41. Հոգեբուժություն 2
42. Խաղի հոգեբանություն և խաղային թերապիա
43. Սոցիալական աշխատանքի հոգեբանական հիմքերը
44. Աուտոգեն մարզում
45. Դեղաբանություն
46. Ախտաբանական հոգեբանություն
47. Սոցիալական կառավարում
48. Սոցիալական աշխատանքը սոցիալապես անապահով խմբերի հետ
49. Մթերստվոգիա
50. Ռացիոնալ էմոտիվ թերապիա
51. Նեյրո-լեզվաբանական ծրագրավորում

Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի սոցիալական աշխատանքի բաժինը ունի վառ արտահայտված հոգեբանական ուղղվածություն: Այստեղ առարկաների 73%-ը վերաբերում են հոգեբանությանը: Առարկաների միայն 18%-ն է բուն մասնագիտական:



Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի «Սոցիալական աշխատանք» ուսումնական ծրագիրը համապատասխանում է ուսումնական ծրագրի՝ համալսարանի կայքում տեղադրված նկարագրությանը. «*սոցիալական աշխատանքը սոցիալական հոգեբանության այն բնագավառն է, որը բուռն կերպով զարգացում է ապրում ողջ աշխարհում: Աշխատելով սոցիալական ծառայություն իրականացնող մարմիններում սոցիալական աշխատողները, որոնք տիրապետելով հոգեբանական ամենատարբեր մեթոդների (հոգեշտկման, հոգեկարգավորման, հոգեթերապևտիկ և այլն) օգնում են մարդկանց իրենց հնարավորություններին իրազեկ լինելու և դրանց շրջանակն ընդլայնելու, զարգացնելու, տիրապետելու, դժվարություններին դիմակայելու և դրանք հաղթահարելու գործընթացում*»³: Այս ուսումնական ծրագիրը ուղղված է նեղ հոգեբանական ուղղվածությամբ մասնագետների պատրաստմանը, որոնք ենթադրաբար ապագայում պետք է գործառնեն հոգեբանական աջակցության կենտրոններում:

Ուրարտու համալսարանի սոցիալական աշխատանքի բակալավրի ուսումնական պլանը ներառում է պետական կրթական չափորոշիչով նախատեսված ընդհանուր մասնագիտական 22 առարկայից 7-ը, որը կազմում է տվյալ բուհի սոցիալական աշխատանքի ուսումնական պլանի ընդհանուր մասնագիտական առարկաների 14%-ը:


ԳՊՄԻ-ի «Սոցիալական աշխատանք» բաժնի ուսումնական ծրագրի ընդհանուր մասնագիտական ենթաբաժինը ներառում է հետևյալ առարկաները՝

1. Սոցիալական աշխատանքի պատմություն
2. Սոցիալական աշխատանքի սոցիոլոգիական հիմքերը
3. Սոցիալական աշխատանքի էթիկական հիմքերը

³ <http://www.urartuuniversity.com/am/academic-programs>


4. Սոցիալական աշխատանքի հոգեբանական հիմքերը
5. Սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը
6. Սոցիալական աշխատանքի հիմունքներ
7. Հետազոտության մեթոդները սոցիալական աշխատանքում
8. Սոցիալական աշխատանքի մեթոդներ
9. Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ
10. Սոցիալական մանկավարժություն
11. Սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում
12. Հոգեբանություն
13. Սոցիալական աշխատանքի մոդելներ
14. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք
15. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ
16. Ժողովրդագրական և սոցիալական վիճակագրություն
17. Սոցիալական աշխատանքի ուղղություններ
18. Սոցիալական քաղաքականության հիմունքներ
19. Ինստիտուցիոնալ սոց.աշխատանք
20. Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ
21. Դեպքի կառավարում
22. Հաղորդակցման և խոսքի մշակույթը սոցիալական աշխատանքում
23. Սոց.աշխատանք խոցելի խմբերի հետ
24. Կոնֆլիկտաբանության հիմունքներ
25. Սոցիալական կառավարում
26. Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն
27. Սոցիալական աշխատանքի ուղղություններ
28. Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք
29. Մարդու իրավունքներ և սոց.աշխատանք
30. Սոցիալական վերահսկողություն և շեղվող վարք
31. Միջոցների հավաքագրում
32. Սոց.խորհրդատվության հիմունքներ
33. Մարդու կյանքի փուլերը
34. Մանկավարժական վալեոլոգիա


Այստեղ ընդհանուր մասնագիտական առարկաները 34-ն են: Ծրագիրը ներառում է չափորոշիչով նախատեսված 26 առարկա, որը կազմում է պետական ուսումնական ծրագրի ընդհանուր մասնագիտական առարկաների 81%-ը:



ԳՊՄՀ-ի սոցիալական աշխատանքի բաժնում երկու մանկավարժական բնույթի առարկա ավել է դասավանդվում, քան նախատեսված է պետական կրթական չափորոշիչով, որոնք են «Մանկավարժական վալեոլոգիան» և «Հատուկ մանակավարժությունը», ինչը, կարծում եմ, կապված է բուհ-ի մանակավարժական ուղղվածության հետ: Ընդհանուր 240 կրեդիտից մասնագիտական առարկաներին տրվում է 165 կրեդիտ:

Ամփոփելով ներկայացված բուհ-երում առկա «Սոցիալական աշխատանք» մասնագիտացմամբ բակալավրի ուսումնական ծրագրերի ուսումնասիրությունը՝ կարող ենք տեսնել հետևյալ ընդհանրական պատկերը:





Աղյուսակի միջոցով ցուցադրենք «սոցիալական աշխատանք» մասնագիտության բակալավրի ուսումնական ծրագիր առաջարկող բուհերի ուսումնական պլանների համապատասխանությունը օրինակելի ուսումնական ծրագրին: Եթե բուհ-երի ուսումնական պլաններում առկա է օրինակելի ուսումնական պլանի նշված առարկան, համապատասխան տողում դրված է «+» նշանը:

Ուսումնական մոդուլի անվանումը	ԵՊՀ	ՀՊՄԻ	Ուրարտու	ԳՊՄՀ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ և ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ				
Պարտադիր դասընթացներ				
Հայոց Լեզու և գրականություն-1	+	+	+	+
Հայոց Լեզու և գրականություն-2	+	+	+	+
Ռուսաց Լեզու-1	+	+	+	+
Ռուսաց Լեզու-2	+	+	+	+
Օտար լեզու-1	+	+	+	+
Օտար լեզու-2	+	+	+	+


<i>Լրացուցիչ լեզվական դասընթաց (ուսաց լեզու-3 կամ օտար լեզու-3)</i>	+		+	+
Հայոց պատմության հիմնահարցեր-1	+	+	+	+
Հայոց պատմության հիմնահարցեր-2	+	+	+	+
Փիլիսոփայության հիմունքներ	+	+		+
Ֆիզդաստիարակություն	+	+	+	+
Կամընտրական դասընթացներ				
Տնտեսագիտություն	+	+		+
Քաղաքագիտություն	+	+	+	+
Իրավագիտություն	+	+	+	+
Մշակութաբանություն	+	+	+	+
Կրոնների պատմություն	+		+	+
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ և ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ				
Պարտադիր դասընթացներ				
Համակարգչից օգտվելու հմտություններ	+	+	+	+
Քաղաքացիական պաշտպանություն	+		+	+
Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	+	+	+	+
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	+	+	+	+
Կամընտրական դասընթացներ				
Մաթեմատիկայի հիմունքներ	+	+	+	+
Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաները	+	+		+
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ				+
Սոցիալական աշխատանքի հիմունքներ	+	+	+	+
Սոց. աշխատանքի սոցիոլոգիական հիմքերը	+	+		+
Սոց. աշխատանքի հոգեբանական հիմքերը	+	+	+	+
Սոց. աշխատանքի իրավական հիմքերը	+	+		+
Հետազոտության մեթոդները սոց. աշխատանքում	+			+
Սոցիալական աշխատանքի պատմություն	+	+	+	+
Հոգեբանություն	+	+		+
Սոցիալական աշխատանքի էթիկական հիմքերը	+	+	+	+
Սոցիալական մանկավարժություն	+	+		+
Մարդու իրավունքները և սոց. աշխատանքը	+	+		+
Սոցիալական քաղաքականության հիմունքներ	+	+		+
Սոցիալական վերահսկողություն և շեղվող վարք	+		+	+
Սոցիալական կառավարում	+			+
Կոնֆլիկտաբանության տեսություն և պրակտիկա	+	+	+	+
Սոցիալական դեպի կառավարում	+			+
Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն	+	+		+
Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 1	+	+		+
Միջոցների հավաքագրում	+			+
Սոց. պաշտպանության համակարգը Հայաստանում	+			+

Ժողովրդագրություն և սոց.վիճակագրություն	+	+		+
Մարդու կյանքի փուլերը	+			+
Սոցիալական խորհրդատվության հիմունքներ	+	+		+
Սոցիալական աշխատանքի մեթոդներ	+	+		+
Սոցիալական աշխատանքի մոդելներ	+	+		+
Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ	+	+	+	+
Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 1	+	+		+
Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 2	+			+
Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 2	+			+
Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 3	+			+
Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 3	+			+
Սոցիալական աշխատանքի ուղղությունները 1	+		+	+
Սոցիալական աշխատանքի ուղղությունները 2	+			+
Ընդհանուր մասնագիտական առարկաների քանակություն	32	19	8	26

Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի «Սոցիալական աշխատանքի» ուսումնական ծրագիրը ամենից շատն է տարբերվում պետական չափորոշիչով նախատեսված ուսումնական ծրագրից. պետական չափորոշիչով նախատեսված ընդհանուր մասնագիտական առարկաների 78%-ը այս ուսումնական ծրագրի մեջ ներառված չեն: ԳՊՄՀ-ի ուսումնական ծրագիրը՝ ըստ պետական կրթական ծրագրին համապատասխանության, երկրորդն է ԵՊՀ-ից հետո: Այստեղ ներառված չեն ընդհանուր մասնագիտական միայն հինգ առարկա, որոնք ի դեպ կրկնվող անվանումներ ունեցող առարկաներն են՝ «Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 2», «Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 3», «Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 2», «Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ 3», «Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 2», «Ինստիտուցիոնալ սոցիալական աշխատանք 3», «Սոցիալական աշխատանքի ուղղությունները 2»:

Պետական կրթական չափորոշիչով նախատեսված ընդհանուր մասնագիտական դասընթացները կազմում են ՀՊՄԻ-ի «Սոցիալական աշխատանքի» բաժնի բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր մասնագիտական առարկաների 40%-ը, Ուրարտու համալսարանի «Սոցիալական աշխատանքի» բաժնի բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր մասնագիտական առարկաների՝ 14%-ը և ԳՊՄՀ-ի «Սոցիալական աշխատանքի» բաժնի բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր մասնագիտական առարկաների՝ 76%-ը:

**Պետական կրթական չափորոշիչով նախատեսված
դասընթացների քանակությունը բուհ-երի ուսումնական
ծրագրերում**



**1.2. «Սոցիալական աշխատանք» մասնագիտացմամբ մագիստրոսի
ուսումնական ծրագրերը ՀՀ բուհ-երում**

Անրադառնանք «Սոցիալական աշխատողի» մագիստրոսի որակավորմանն ուղղված ուսումնական ծրագրերին: Այսպիսի ուսումնական ծրագրեր առկա են միայն ԵՊՀ-ում, ՀՊՄՀ-ում և Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանում: ԳՊՄԻ-ն «Սոցիալական աշխատողի» մագիստրոսական ուսումնական ծրագիր չի իրականացնում:

0221՝ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության օրինակելի ուսումնական պլանը ներառում է հետևյալ դասընթացները՝

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

- Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում
- Մասնագիտության արդիական հիմնախնդիրները

Լրացական դասընթացներ

- Անգլերեն լեզու
- Մասնագիտության փիլիսոփայական հարցեր

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

- Սոցիալական ծառայությունների նախագծում և կազմակերպում
- Սոցիալական ծառայությունների արդյունավետության գնահատում
- Միջազգային սոցիալական աշխատանք
- Հայաստանի սոցիալական դոկտրինան
- Սոցիալական աշխատանքի դասավանդման մեթոդիկա
- Հաշմանդամների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում
- Սոցիալական աշխատանքի մեթոդաբանական հիմնախնդիրները
- Ընտանեկան սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ
- Երեխաների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում
- Տարեցների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում
- Իրավախախտների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում
- Խմբային սոցիալական աշխատանքի պրակտիկում
- Համայնքային սոցիալական աշխատանքի պրակտիկում
- Սոցիալական հետազոտության ժամանակակից մեթոդներ
- Մարդու վարքը և սոցիալական միջավայրը
- Արդի սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները

Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

- Սոցիալական աշխատանքի արժեքները
- Սոցիալական ռիսկի գնահատում

- Սոցիալական բարեկեցությունը երկրորդ աշխարհի երկրներում
- Սոցիալական աշխատանք կորուստ ապրած մարդկանց հետ
- PR տեխնոլոգիաները սոցիալական աշխատանքի ոլորտում
- Ռազմավարական պլանավորում

Տվյալ օրինակելի ուսումնական ծրագիրը ներառում է 24 մասնագիտական դասընթաց, որոնցից 16-ը պարտադիր են: Ընդհանուր 120 կրեդիտից մասնագիտական առարկաներին տրվում է 57 կրեդիտ:

Մագիստրոսական ուսումնական ծրագիրը ուսանողների առաջարկում է ուսումնասիրել սոցիալական աշխատանքի բնագավառները, հայաստանյան և միջազգային փորձը: Բակալավրի և մագիստրոսի օրինակելի ուսումնական պլանները համընկնող առարկաներ չեն ներառում: Մակայն մագիստրոսական ծրագիրը ամբողջությամբ կտրված է հարակից ոլորտներից, թեև սոցիալական աշխատանքը միջոցառված քննություն է կրում և անմիջականորեն կապված է սոցիոլոգիայի և հոգեբանության հետ:

ԵՊՀ-ի «Սոցիալական աշխատանք» մագիստրոսի ուսումնական ծրագիրը ներառում է օրինակելի ուսումնական պլանի այս բոլոր դասընթացները:

Անրադառնանք ՀՊՄԻ-ի և Ուրարտու համալսարանների «Սոցիալական աշխատանք» մագիստրոսի ուսումնական ծրագրերի մասնագիտական դասընթացների շարքին:

ՀՊՄԻ-ի «Սոցիալական աշխատանք» մագիստրոսի ուսումնական ծրագիրը ներառում է հետևյալ մասնագիտական դասընթացները՝

1. Սոցիալական աշխատանքի մասնագիտության փիլիսոփայական հարցեր
2. Սոցիալական աշխատանքը զարգացած երկրներում
3. Սոցիալական էկոլոգիա
4. Սոցիալական աշխատանքի դերը ՀՀ համայնքներում
5. Սոցիալական աշխատանքը քրեակատարողական հիմնարկներում
6. Հետազոտական մեթոդները սոցիալական աշխատանքում
7. Սոցիալական աշխատանքի մոդելների համեմատական վերլուծություն
8. Սոցիալական ռիսկեր և դրանց հաղթահարումը
9. Անձի տեսություններ և դրանց կիրառումը
10. Սոցիալական ծրագրերի գնահատում
11. Սոցիոմշակութային տրանսֆորմացիաներ
12. Կլինիկական միջամտության մեթոդներ
13. Հաղորդակցությունը սոցիալական աշխատանքում
14. Սոցիալական աշխատանքը ծերանոցներում
15. Սոցիալական պաշտպանության համակարգը ՀՀ-ում
16. Կոնֆլիկտները սոցիալական աշխատանքում

17. Սոցիալական աշխատանքի իսկության բացորոշում
18. Սոցիալական աշխատանքը դեռահաս երեխաների հետ
19. Սոցիալական վերահսկողություն
20. Սոցիալական տրասֆորմային գործընթացը ՀՀ-ում
21. Սոցիալական աշխատանքը սոցիալապես անպաշտպան խմբերի հետ
22. Կանխագուշակումը սոցիալական աշխատանքում

ՀՊՄԻ-ի մագիստրոսական ուսումնական պլանը ներառում է օրինակելի ուսումնական պլանի մասնագիտական դասընթացների 33%-ը: Մասնագիտական առարկաներից տասնյոթը վերաբերում են միայն սոցիալական աշխատանքին, մեկական առարկա ներկայացված է հոգեբանությունից և մանկավարժությունից, երկու առարկա՝ սոցիոլոգիայից: Մասնագիտական դասընթացներից 8-ը, այսինքն՝ 36%-ը համընկնում է օրինակելի ուսումնական պլանի մասնագիտական առարկաների հետ: Մագիստրոսական ուսումնական պլանում կարող ենք տեսնել առարկաներ, որոնք առկա են բակալավրի օրինակելի ուսումնական պլանում, ինչպես «հետազոտական մեթոդները սոցիալական աշխատանքում», «սոցիալական պաշտպանության համակարգը ՀՀ-ում», «սոցիալական վերահսկողություն»: Ընդհանուր 120 կրեդիտից մասնագիտական առարկաներին տրվում է 52 կրեդիտ:

ՀՊՄԻ-ի ուսումնական ծրագիրը չի ներառում օրինակելի ուսումնական պլանով նախատեսված հետևյալ պարտադիր մասնագիտական դասընթացները՝

1. Սոցիալական ծառայությունների նախագծում և կազմակերպում
2. Միջազգային սոցիալական աշխատանք
3. Հայաստանի սոցիալական դոկտրինան
4. Սոցիալական աշխատանքի դասավանդման մեթոդիկա
5. Հաշմանդամների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում
6. Սոցիալական աշխատանքի մեթոդաբանական հիմնախնդիրները
7. Ընտանեկան սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ
8. Խմբային սոցիալական աշխատանքի պրակտիկում
9. Մարդու վարքը և սոցիալական միջավայրը
10. Արդի սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները

և կամընտրական դասընթացները՝

1. Սոցիալական աշխատանքի արժեքները
2. Սոցիալական բարեկեցությունը երկրորդ աշխարհի երկրներում
3. Սոցիալական աշխատանք կորուստ ապրած մարդկանց հետ
4. PR տեխնոլոգիաները սոցիալական աշխատանքի ոլորտում
5. Ռազմավարական պլանավորում

Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի «Սոցիալական աշխատանք» մագիստրոսի ուսումնական ծրագրի մասնագիտական դասընթացներն են՝

Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ

- Մասնագիտության փիլիսոփայական հիմնահարցերը
- Մարդու իրավունքները և սոցիալական աշխատանքը

Կամընտրական դասընթացներ

- Էթնոսոցիոլոգիական և էթնոհոգեբանական հետազոտական մեթոդները
- Անթրոպոլոգիական հետազոտական մեթոդները

Մասնագիտական ընդհանուր դասընթացներ

- Սոցիալական աշխատանքի գործընթացը, մեթոդները և մոդելները
- Սոցիալական ապահովության, սոցիալական անվտանգության քաղաքականություն: Սոցիալական պաշտպանություն: ՀՀ սոցիալական ռիսկերի կառավարման համակարգ:

- Սոցիոլոգիական հետազոտության մեթոդները

Սոցիալական աշխատանքի պրակտիկում

- Սոցիալական ծառայության նախագծում և կազմակերպում
- Ընտանեկան սոցիալական աշխատանք (Համայնքային ընտանեկան սոցիալական կենտրոններ: Համայնքային կարիքի մեթոդներ, գործիքներ)
- Սոցիալական աշխատանք երեխաների, դեռահասների հետ:
- Սոցիալական աշխատանք ծերերի հետ: Ծերութաբանության հիմնախնդիրները
- Սոցիալական աշխատանք իրավախախտների հետ
- Սոցիալական աշխատանք գործազուրկների հետ
- Սոցիալական աշխատանք աղքատների հետ
- Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում


Հոգեկան առողջության աջակցման սոցիալական աշխատանք

- Սոցիալական աշխատանքի կազմակերպում հոգեկան առողջության ոլորտում: Հոգեբանական հետազոտության ժամանակակից մեթոդներ և տեխնիկաներ
 - Հոգեթերապիայի և կոնսուլտացիայի հիմունքներ
 - Հոգեվերլուծության մեթոդաբանություն, մեթոդներ և տեխնիկաներ 1
 - Հոգեվերլուծության մեթոդաբանություն, մեթոդներ և տեխնիկաներ 2
 - Զարգացման ճգնաժամային տարիքների հետազոտման մեթոդ
 - կոգնիտիվ թերապիայի կիրառումը հաշմանդամների, ծերերի, գործազուրկների, աղքատների հետ իրականացվող սոցիալական աշխատանքում
 - Խմբային հոգեթերապիայի կիրառումը խոցելի խմբերի հետ

- Սոցիալական աշխատանք հաշմանդամներին հետ

Այստեղ առկա է դասընթացների առանձին հոգեկան առողջության աջակցման բլոկ, այսինքն՝ մագիստրոսական ծրագիրը, ինչպես բակալավրի ծրագիրը ունեն հոգաբանական ուղղվածություն, ծրագրի մասնագիտական առարկաների 30%-ը կրում է հոգեբանական ուղղվածություն:

Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի մագիստրոսական ուսումնական պլանի մասնագիտական դասընթացների բլոկը ներառում է 23 դասընթաց: Այս դասընթացներից 13-ը վերաբերում են սոցիալական աշխատանքին, 7-ը՝ հոգեբանությանը, 1-ը՝ իրավագիտությանը, 2-ը՝ սոցիոլոգիային:



Հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանի «Սոցիալական աշխատանք» մագիստրոսի ուսումնական ծրագրում ներառված են օրինակելի ուսումնական ծրագրի մասնագիտական դասընթացների 42%-ը: Ներառված չեն հետևյալ պարտադիր մասնագիտական առարկաները՝


1. Սոցիալական ծառայությունների արդյունավետության գնահատում
2. Միջազգային սոցիալական աշխատանք
3. Հայաստանի սոցիալական դոկտրինան
4. Սոցիալական աշխատանքի դասավանդման մեթոդիկա
5. Սոցիալական աշխատանքի մեթոդաբանական հիմնախնդիրները
6. Խմբային սոցիալական աշխատանքի պրակտիկում
7. Մարդու վարքը և սոցիալական միջավայրը

8. Արդի սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները և կամընտրական առարկաները՝

1. Սոցիալական աշխատանքի արժեքները
2. Սոցիալական բարեկեցությունը երկրորդ աշխարհի երկրներում
3. Սոցիալական աշխատանք կորուստ ապրած մարդկանց հետ
4. PR տեխնոլոգիաները սոցիալական աշխատանքի ոլորտում
5. Ռազմավարական պլանավորում

Ուրարտու համալսարանի «Սոցիալական աշխատանք» մագիստրոսի ուսումնական ծրագրի մասնագիտական առարկաների 43%-ը համընկնում է օրինակելի ուսումնական ծրագրի դասընթացների հետ:

Ամփոփել «Սոցիալական աշխատանք» մասնագիտացմամբ մագիստրոսի ուսումնական ծրագրերի ուսումնասիրությունը՝ ներկայացնենք ընդհանրական պատկերը:



Մասնագիտական դասընթացների քանակությունը երեք բուհ-երում էլ գրեթե նույնն է. ԵՊՀ-ում դասավանդվում է 24 մասնագիտական առարկա, ՀՊՄԻ-ում՝ 22, Սոցիոլոգիայի և հոգեբանության Ուրարտու համալսարանում՝ 23:

Աղյուսակի միջոցով ցուցադրենք «սոցիալական աշխատանք» մասնագիտության մագիստրոսի ուսումնական ծրագիր առաջարկող բուհերի ուսումնական պլանների համապատասխանությունը օրինակելի ուսումնական ծրագրին:

Մագիստրոսական ծրագրի օրինակելի ուսումնական պլանի բոլոր դասընթացները առկա են ԵՊՀ-ի ուսումնական պլանում, ՀՊՄԻ-ի ուսումնական պլանում առկա է օրինակելի ուսումնական պլանի 8 մասնագիտական առարկա, Ուրարտու համալսարանի ուսումնական պլանում ` 10: Այսինքն, Ուրարտու համալսարանի ուսումնական պլանը պետական կրթական չափորոշիչով նախատեսված ուսումնական պլանին առավել շատ է համապատասխանում, քան

	ԵՊՀ	ՀՊՄԻ	Ուրարտու
<i>Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ</i>			
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում	+	+	+
Մասնագիտության արդիական հիմնախնդիրները	+		
<i>Լրացական դասընթացներ</i>			
Անգլերեն լեզու	+	+	+
<i>Մասնագիտության փիլիսոփայական հարցեր</i>			
Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ			
Սոցիալական ծառայությունների նախագծում և կազմակերպում	+		+
Սոցիալական ծառայությունների արդյունավետության գնահատում	+	+	
Միջազգային սոցիալական աշխատանք	+		
Հայաստանի սոցիալական դոկտրինան	+		
Սոցիալական աշխատանքի դասավանդման մեթոդիկա	+		
Հաշմանդամների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում	+		+
Սոցիալական աշխատանքի մեթոդաբանական հիմնախնդիրները	+		
Ընտանեկան սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ	+		+
Երեխաների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում	+	+	+
Տարեցների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում	+	+	+
Իրավախախտների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկում	+	+	+
Խնբային սոցիալական աշխատանքի պրակտիկում	+		
Համայնքային սոցիալական աշխատանքի պրակտիկում	+	+	+
Սոցիալական հետազոտության ժամանակակից մեթոդներ	+	+	+
Մարդու վարքը և սոցիալական միջավայրը	+		
Արդի սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները	+		
Սոցիալական աշխատանքի արժեքները	+		
Սոցիալական ռիսկի գնահատում	+	+	+
Սոցիալական բարեկեցությունը երկրորդ աշխարհի երկրներում	+		
Սոցիալական աշխատանք կորուստ ապրած մարդկանց հետ	+		
PR տեխնոլոգիաները սոցիալական աշխատանքի ոլորտում	+		
Ռազմավարական պլանավորում	+		
Մասնագիտական դասընթացների քանակություն	24	8	1024

ՀՊՄԻ-ի ուսումնական պլանը:

